


**ՉԱՐԵՔԱ ԱՆԱՊԱՏՈՒՄ 1731 թ. ԳՈՐԾՎԱԾ ԳՈՐԳԻ  
ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

**ՊՈՂՈՍՅԱՆ ԱՇԽՈՒՆՋ**

Պատմական գիտությունների թեկնածու,  
ԳՊՀ դասախոս  
e-mail: ashkhunjpoghosyan@gmail.com

**Սույն ուսումնասիրության առարկան Արցախի հյուսիսարևելյան մասում գտնվող Չարեքա վանքում 1731 թ. գործված գորգն է: Դա պատկանում է խորանավոր գորգերի խմբին դասվող «Գանձասար» տիպին: Այն ունի հայափառ հիշատակարան, որում նշված է գործելու տեղի անվանումը, կատարման տարեթիվն ու պատվիրատուի անունը: Այդպիսով, հայոց գորգագործական մշակույթի գեղազարդման տարրերի ուսումնասիրման հարցում այս գորգի գեղազարդման համակարգն ունի սկզբնաղբյուրային նշանակություն: Օգտվելով եղած հնարավորություններից՝ հեղինակը որոշակի շրկումներ է կատարել 18-20-րդ դարերին վերաբերող այս տիպի գորգերի ավանդույթների ծագումնաբանական և արեալային տարածման/այդ թվում Փոքր Ասիայում/ հարցերում:**



**Պատկեր 1.**  
Գորգ «Գանձասար», 1731թ.

**Բանալի բառեր՝** «Գանձասար», Չարեքա վանք, «կենաց ծառ», «խոյեղջյուր», «Կոզովիտ», «Լադիկ», «կակաչ»:

Պատմական հյուսիս-արևելյան Հայաստանի՝ Արցախի, Ուտիքի և Սյունիքի գորգագործական մշակույթը առանձնահատուկ տեղ ունի հայոց գորգագործական մշակույթի համակարգում: Մենք մեր նախորդ ուսումնասիրություններում բազմիցս քննության առարկա ենք դարձրել հատկապես արցախյան գորգերի

ծագումնաբանության, գորգերի տիպաբանության ու նաև դրանց արեալային տարածման հիմնահարցերը<sup>1</sup>: Ի շարս դրանցում կարևորված հարցադրումների՝ այստեղ կներկայացնենք հայատառ թվակիր հիշատակարանով գորգի մեկ նմուշ, որը դեռևս մնում է ըստ արժանվույն չգնահատված: Այն ստեղծվել է հյուսիսային Արցախում և իր գեղազարդման մանրամասների առանձնահատկությունների բերումով իրականում առանցքային նշանակություն ունի Արցախի և ընդհանրապես հայոց գորգագործական կենտրոնների պատմության ամբողջականացման գործում: Խոսքը վերաբերում է բազմախորան գեղազարդման համակարգի տարբերակով բնորոշվող մի գորգի, որն ունի հայատառ թվակիր հիշատակարան ու հենց միայն այդքանով էլ պետք է կարևորվի հայոց գորգագործական մշակույթի ուսումնասիրման գործում:

Մենք խորանավոր ու սյունազարդ գորգերն առանձնացրել ենք առանձին՝ «Խորանավոր» գորգերի խմբում, որոնք բնորոշվում են գորգադաշտում պատկերված մեկ և ավելի խորաններով: Սրանք այն գորգերն են, որոնք առավել քան մյուսները մեծամասամբ առնչվում են եկեղեցու և ընդհանրապես կրոնական արարողակարգերի հետ: Հայտնի է, որ Հայ առաքելական եկեղեցու հոգևորականներն իրենց աստիճանակարգին համապատասխան ունեցել են արարողակարգային գորգեր, ու մենք այն կարծիքին ենք, որ խորանավոր գորգերը նախատեսված են եղել նաև նրանց

---

<sup>1</sup>Ա. Ա., Պողոսյան, Վիշապագորգերի ծագումնաբանության և տարածման արեալների հարցի շուրջ, «Հանդէս Ամսօրեայ», հայագիտական ուսումնաթերթ, Վիեննա-Երևան, Մխիթարյան հրատարակչատուն, 2004, թիվ 1-12, էջ, 367-415; **Նույնի՝** Կովկասյան ու փոքրասիական գորգագործական կենտրոնների փոխառնչությունների մասին «Գիտական հոդվածների ժողովածու», Գավառի պետական համալսարան, 1, Եր., 2014, էջ 270-282; **Նույնի՝** Շուշին՝ գորգագործական մշակույթի կենտրոն (ԺԹ դարի վերջ-Ի դարի առաջին քառորդ), «**Էջմիածին**» կրոնագիտական-հայագիտական հանդես, Էջմիածին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հրատարակչություն, 2014, Բ, էջ 42-50: **Նույնի՝** Արցախյան գորգագործական ավանդույթների արեալային տարածման ու Կովկասի հարավարևելյան գորգագործական կենտրոնների փոխառնչությունների մասին, «Բանբեր հայագիտության», 2015, թիվ 2-3, էջ 78-104: **Նույնի՝ «Եռախորան»** գորգի թվագրման հարցի շուրջ, «Գիտական հոդվածների ժողովածու», Գավառի պետական համալսարան, 3, 2016, էջ 154-166: **Poghosyan Ashkhunj, Rug weaving Culture of Artsakh**, Historico-Ethnographic illustrated study, “Scholars”, Press, Saarbrücken, 2015; **Poghosyan Ashkhunj, On the Origin Anatolian Rugs**, /Անատոլիական գորգերի ծագումնաբանության հարցի շուրջ/, Armenian Knot: Traditions of Carpet Weaving Art.Proceedings of the international Conference/Yerevan, 20-22 November, 2013/, papers, Yerevan, History museum of Armenia, 2016, էջ 258-270;

համար: Ըստ երևույթին, հենց դրանով էլ պայմանավորված է այս գորգերի գեղազարդման համակարգում եկեղեցական առարկաների՝ ջահի կամ կանթեղի պատկերների, ինչպես նաև բուսածաղկային նախշերի ու հորինվածքների առկայությունը:

Խնդրո առարկա գորգը Աղվանից Ներսես III կաթողիկոսին վերագրվող 1731թ. գործված գորգն է, որը, ըստ Հարություն Քուրտյանի, պահվում է Երուսաղեմի սուրբ Հակոբ եկեղեցու թանգարանում **/պատկեր 1/**: Հարություն Քուրտյանը անձամբ տեսել ու հետազոտել է այդ գորգի տեխնոլոգիական հատկանիշները և անդրադարձել է նաև դրա ծագումնաբանական հարցերին: Պետք է ասել, որ այս գորգին անդրադարձած մյուս բոլոր ուսումնասիրողներից որևէ մեկը այն չի տեսել և մեր ձեռքի տակ եղած տեղեկությունները սահմանափակվում են միայն անվանի հայագետի հրապարակած նյութերով, այդ թվում՝ սև ու սպիտակ միակ լուսանկարով: Ըստ այդմ՝ այն ունի հայատառ թվակիր ընդարձակ արձանագրություն, որը նույնությամբ գործված է գորգի վերին մասում՝ արտաքին և ներքին նեղ գոտիների ամբողջ լայնությամբ: Դրանում ասված է. «**ՅԻԶԵԿԵ Ի ՄԱՐՐԱՓԱՅՂ ԵՂՈՐԹՍ ԸՆԵՐ ՆԵՐՍԷՍ ՄԵՂԱԿԱՐՈՒ Կ/Ա/ԹՈՂԻԿՈՍ ԱՂՈՒԱՆԻ/Գ/ Է ՍԿԱՏՈՆ ԱՄԻՆ /...այրված.../ ԼՈՅՍ ԸՆԿԱԼ ԶԱՐԵՐՈՒ ՍՐ ԱՆԱԿԱՍԻՆ ՌՃՁ ԹՎԻՆ**»<sup>2</sup>:

**Զարեքի վանքը** (նաև՝ Զարեքավանք, Զարեքա անապատ) գտնվում է ներկայիս պատմական Ուտիք նահանգի Գարդման գավառում՝ Փիվի գյուղի մերձակայքում, ոչ հեռու Զարեք քերդից **/պատկեր 2/**: Հիմնական կառույցների շինարարությունն իրականացվել է XVIII դարում: Եղել է գրչության կենտրոն և ուսումնական հաստատություն<sup>3</sup>: Հ. Քուրտյանի հրապարա-



**Պատկեր 2.** Զարեքա վանական համալիրը:

<sup>1</sup> Հ.Քուրտեան, Գորգը հայոց մոտ, Վենետիկ, սբ. Ղազար, 1947:  
<sup>2</sup> Հ.Քուրտեան, նշվ.աշխ., էջ 68: Տես նաև Ս. Դավթյան, Դրվագներ ..., էջ 128 -129, Անի Մխիթարյան, Հայոց ազգագրության թանգարանի խորանավոր գորգերը, «Հայոց գորգագործական մշակույթը» հանրապետական երկրորդ գիտաժողովի նյութերի ժողովածու, Եր., 2016, էջ 53-66:  
<sup>3</sup> [https://m.facebook.com/permalink.php?story\\_fbid=730558507028317&id=491025960981574](https://m.facebook.com/permalink.php?story_fbid=730558507028317&id=491025960981574)

կաձ տեղեկությունների համաձայն՝ այն գործվաձ է մետաքսե հենքի վրա և թեև տեղ-տեղ այրվաձ է ու զգալի կորուստներ կան նաև դաշտի կենտրոնական հատվաձում, սակայն դեռևս ուներ ներկայանալի վիձակ: Ընդ որում՝ մասնակի կորուստներ կան նաև հիշատակարանի որոշ հատվաձ-ներում՝:

Այս գորգի գեղազարդման համակարգում առանցքայինը դաշտի կենտրոնական հատվաձում պատկերվաձ երկայնաձիգ չորս շրջանակներն են, որոնց գազաթները երիզվաձ են կեռիկներով: Դրանցում ամփոփվաձ են տարատեսակ մանր բուսանախշեր ու զարդեր: Դաշտի ձայրերում էլ մեկ լայնակի շարքով պատկերվաձ են վարսանդավոր խոշոր բուսանախշեր՝ որոնք մասնագիտական գրականության մեջ տարբերակվաձ են «կակաչ» անվա-նումով:

Այս գորգի պատմական բացառիկ արժեքը, ինչպես վերն ասվեց, առաջին հերթին պայմանավորվաձ է հիշատակարանով: Դրանում հստակորեն վկայվաձ են ստեղձման տարեթիվը, վայրն ու նաև պատվիրատուն: Վերջինս Աղվանից կաթողիկոս Ներսես III-ն է, միանգամայն հայտնի հոգևոր գործիչ, որը եպիսկոպոսական աստիձանով եղել է Երից Մանկանց վանքի վանահայրը, շինարարական աշխատանքներ էր իրականացրել նաև Չարեքա վանքում և 1726 թվականին կաթողիկոսական աթոռում հաջորդել էր Եսայի Հասան Ջալալյանին<sup>2</sup>:

Այդպիսով, շուրջ երեք հարյուր տարի առաջ ստեղձվաձ այս գորգի գեղազարդման համակարգն ու տեխնիկատեխնոլոգիական հատկանիշներն ինքնին ստույգ սկզբնաղբյուրներ են ուշ միջնադարյան ու XVIII-XIX դարերի հայոց գորգերի առանձին տիպերի և ընդհանրապես հայոց գորգերի գեղազարդման մանրամասերի բացահայտման գորձում: Մենք չենք կարող որևէ տեսակետ հայտնել գորգի նախատիպի մասին՝ այն ընդօրինակում է գոյություն ունեցաձ որևէ նմուշից, թէ ոչ, բայց Չարեքա անապատում գորձվաձ լինելու հանգամանքն ինքնին վկայում է, որ այն ստեղձել են այդտեղ գոյություն ունեցաձ գորձատների մասնագետները: Միաձամանակ կարող ենք հստակորեն ենթադրել, որ դրա գեղազարդման համակարգը կրում է հյուսիսային Արցախի գորգագորձական կենտրոններում ստեղձվաձ ավանդույթների կնիքը: Նկատի ունենալով տարաձաշրջանի հոգևոր ու մշակութային կյանքում Գանձասարի վանական համալիրի ունեցաձ կարևորությունը՝ այս գորգն ու ընդհանրապես դրա գեղազարդման համակարգով բնորոշվող

<sup>1</sup> Հ.Քուրտեան, նշվ. աշխ., էջ 68:

<sup>2</sup> Տես՝ Մ. Բալայան, Հայ աղվանից եկեղեցին /սկզբնավորումից մինչև մեր օրերը/, Ստեփանակերտ, «Վաչագան Բարեպաշտ» հրատարակչություն, 2009, էջ 178-179:

գորգերի տիպը մենք անվանակոչել ենք «**Գանձասար**»<sup>1</sup>: Հատուկ շեշտենք, որ հազվագյուտ են ընդհանրապես կատարման ժամանակի, վայրի ու նաև պատվիրատուի մասին հստակ տեղեկություններ պարունակող հիշատակարանով գորգերը:



**Պատկեր 3.** Հատված «Գանձասար» գորգից:

Այս գորգի գեղազարդման համակարգում կան պատկերագրման սկզբունքներ ու հատկապես գեղազարդման մանրամասեր, որոնք, ըստ XIX- XX դ. սկզբի նյութերի, լայնորեն հայտնի էին նաև պատմական Հայաստանի և

մերձակա տարածաշրջանների մի շարք գորգագործական կենտրոններում:

Այս առումով «Գանձասար»-ի գեղազարդման համակարգում կարևորում ենք՝

- ա. բուսածաղկային «**կակաչ**» հորինվածքները,
- բ. եզրագոտիների հիմնական տարրերը,
- գ. «խոյեղջուր» պատկերները,
- դ. երկայնաձիգ խոշոր շրջանակները և դրանցում ամփոփված

զարդանախշերը:

Ստորև կփորձենք ներկայացնել դրանց պատմամշակութային նշանակության հիմնական արտահայտությունները.

**Ա. «Կակաչ»** հորինվածքները գորգադաշտի վարի ու վերի մասերում ներկայացված են մեկական լայնակի շարքով /**պատկեր 3/**: Դրանք աչքի են ընկնում հստակ և իրական պատկերագրումով, համաչափ են ու ներդաշնակորեն կապակցված են գորգադաշտի գեղազարդման համակարգի գաղափարախոսությանն ու գեղազարդման սկզբունքներին:

<sup>1</sup> **Ա. Պողոսյան**, Կովկասյան գորգերի հետազոտման խնդրի շուրջ, «Հայոց գորգագործական մշակույթը» հանրապետական երկրորդ գիտաժողովի նյութերի ժողովածու, Եր., 2016, էջ 76:

Այս հորինվածքները փոքրասիական գորգագործական կենտրոններում լայնորեն հայտնի ու մասնագիտական անվանումով տարբերակված գորգերի



**Պատկեր 4.** Հատված «Լադիկ» տիպի

զրջանակներում **«Լադիկ»** գեղազարդման համակարգի հիմնական տարրերից են, ներկայացվում են մեկ լայնակի շարքով և ամբողջությամբ զբաղեցնում են գորգադաշտի ստորին հատվածը /**պատկեր 4**:<sup>1</sup> «Կակաչ» հորինվածքը համարվում է, այսպես կոչված, «Օտոմանյան ասեղնագործություն» հասկացության բնորոշիչ հորինվածքներից մեկը, և ըստ այդմ էլ ընդունված է որպես իսլամական արվեստին բնորոշ գեղազարդման տարր: Մեր մոտեցումները փոքրասիական

կիրառական -գեղազարդման առարկաների ծագումնաբանության առումով հիմնված են պատմագագագրական ու ժողովրդագրական հետազոտություններից բացահայտված արդյունքների վրա: Բացի դրանից՝ դրանք համադրել ենք XVII – XVIII դարերին վերաբերող մշակութային արժեքների հետ, որոնց ծագման հետ կապված տեղեկությունները նույնքան արժանահավատ են, որքան այս խնդրո առարկա 1731 թվականին գործված գորգինը: Այդպիսին է, օրինակ, 1795 թ. հյուսիսային Արցախում ստեղծված Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի գանձատանը պահվող ոսկեթել ասեղնագործությամբ կաթողիկոսական թագը<sup>2</sup>: Այն նույնպես ունի հայատառ թվակիր հիշատակարան՝ **«Յիշատակ է թագս ի Մելիք Բեգլարի կողակից Մարիամեայ ի դուռն Հոռեկայ վանքի. ՌՄԽԴ»**: Այս վանքը նույնպես գտնվում է հյուսիսային Արցախում, իսկ թագի գեղազարդման համակարգում էլ կարևորված է «կակաչ» հորինվածքը: Ասել է թե՛ այդ հորինվածքը լայնորեն հայտնի էր Արցախի մշակութային կենտրոններում, մասնավորապես Գարդմանում և Զրաբերդում: Հարկ ենք համարում շեշտել, որ սրանք այն տարածաշրջաններից են, որոնք կտրված էին առևտրական ուղիներից, ուստի հազիվ թե վանական համալիրներին կից եղած մենաստաններում զգալի լինեին մշակութային արտաքին ազդեցությունները: Ինչ վերաբերում է

<sup>1</sup> <https://rjohnhowe.wordpress.com/2008/03/>

<sup>2</sup> Ա. Պողոսյան, Հարթակարով ասեղնագործական մշակույթի մասին, «Էջմիածին» կրոնագիտական-հայագիտական հանդես, 2011, է.Ս. Էջմիածին, էջ 55:

ասեղնագործության ոլորտում «Օտոմանյան ասեղնագործություն» հասկացությանը, կարծում ենք, որ իրականում այդպիսին գոյություն չի էլ ունեցել: Սուլթանական հարեմներում ստեղծված ասեղնագործությունները և ընդհանրապես մշակութային արժեքներն առաջին հերթին պարունակում են Օսմանյան Թուրքիայի տարածքում եղած ժողովուրդների՝ առաջին հերթին փոքրասիական ու բալկանյան բնիկ ժողովուրդներին բնորոշ ավանդույթները: Ընդ որում հանրահայտ է, որ սուլթանական հարեմներում գեղարվեստական գործվածքով ու ընդհանրապես արհեստներով հիմնականում զբաղվում էին հայերը<sup>1</sup>: Բացի դրանից՝ օսմանյան կամ թուրքական մշակույթ լավագույն դեպքում կարող էր ձևավորվել միայն XVI – XVII դարերում: Մինչդեռ հենց XVI դարի վերջին քառորդից էլ սկսվում են Փոքր Ասիա, նաև Էգեյան ու Մարմարա ծովերի ափամերձ տարածաշրջաններ հայոց զանգվածային նոր բռնի տեղաշարժերի իրականացման գործընթացները<sup>2</sup>: Այդ ճանապարհով պատմական Հայաստանի տարբեր նահանգներից, մասնավորապես Հայոց արևելից կողմից ու հյուսիսարևմտյան Իրանից հազարավոր արհեստավորներ են տարվել Կոստանդնուպոլիս, Բուրսա, Իզմիր և այլ քաղաքներ, ու այդ ճանապարհով ստեղծված մշակութային արժեքներն են որոնք արտերկրի ու թուրք արվեստաբանների ջանքերով գիտական շրջանառության են դրվել որպես օսմանյան մշակութային արժեքներ:

Ամեն դեպքում հակառակ ուղղությամբ տեղաշարժեր մեզ հայտնի չեն, ուստի կարող ենք եզրակացնել, որ 1731 թվականին գործված «Գանձասար» գորգի գեղազարդման համակարգում կարևորված «կակաչ» բուսածաղկային հորինվածքը բնորոշ տարր էր պատմական Հայաստանի արևելյան ու մասնավորապես հյուսիսարևելյան մշակութային կենտրոններում:

Ինքնին դա «կենաց ծառ» հորինվածքի տարբերակ է, ու բնական է, որ այն պետք է կարևորվեր գորգի գեղազարդման համակարգում: Մանավանդ այս պարագայում, երբ խնդրո առարկա գորգը նախատեսված էր բարձրաստիճան հոգևորականի համար: Այս առումով էլ հարկ է նկատի ունենալ, որ խորանավոր գորգերի՝ վերը հիշատակված «Լադիկ» ենթախմբին պատկանողները հիմնականում աղոթագրգեր են<sup>3</sup>:

---

<sup>1</sup>Այս մասին տե՛ս Poghosyan Ashkhunj, *On the Origin Anatolian Rugs*, էջ 261-263, 272-273;

<sup>2</sup> Ա. Պողոսյան, *Հայաստանի պատմական ժողովրդագրություն*, Ուսումնամեթոդական ձեռնարկ մագիստրատուրայի ուսանողների համար, Եր. , 2018, էջ 37-39, 43-44:

<sup>3</sup>Տե՛ս Maritz - J. Iten, *Der Anatolische teppihfh*, Munhcen, Office du Livre, էջ 236-237, 242; Des Tapis Turks, Istanbul, Hitit Color, 1989, էջ 49, 96, 97:

Ամփոփելով խնդրո առարկա հորինվածքի մասին ասվածը՝ հարկ ենք համարում շեշտել, որ արտերկրի արվեստագետների կողմից դրան «օտոմանյան» անվանելն ընդհանրապես հիմնազուրկ է: Մյուս կողմից էլ հնարավոր համարելով այն, որ այդ հորինվածքը մինչ հայոց՝ վերն ասված տեղաշարժերն էլ հայտնի էր փոքրասիական մշակութային կենտրոններում ձևավորված գործվածքի գեղազարդման ավանդույթներին, այդուհանդերձ դրա ծագման ակունքներն ինչպես տեսանք, չպետք է կապել միայն Փոքր Ասիայի հետ:

**Բ. Բավականաչափ հետաքրքրություն է ներկայացնում «Գանձասար» գորգի**



**Պատկեր 5.**

**եզրագոտիների հիմնական տարրը:** Դա «կենաց ծառի» ինքնատիպ նմուշ է՝ ցողունը կամ բունը զանգվածեղ, իսկ ճյուղերն էլ համեմատաբար բարակ ու գծայնացված: Դրա տարբերակները՝ որպես գորգի լայն գոտու հիմնական տարր ու նաև գորգադաշտի հիմնական հորինվածքի

լրացուցիչ տարր, ներկայացված են պատմական Հայաստանի արևելյան ու հյուսիս-արևելյան գորգագործական կենտրոններին բնորոշ և XIX- XX դ. սկզբներին վերաբերող գորգերի գեղազարդման համակարգերում: Մասնավորապես ուշագրավ տարբերակ ենք համարում «Լոռի-Փամբակ» տիպի գորգերից մեկի գեղազարդման համակարգում ներկայացված տարբերակը /**պատկեր 5**/: Սակայն առավել ուշագրավ է «**Մեգերյան**» հավաքածուի կազմում պահվող XIX դ. վերջին քառորդով թվագրվող ու հյուսիսային Արցախ-Տավուշ գորգագործական կենտրոններում ստեղծված մի գորգ, որի կենտրոնական դաշտը ամբողջությամբ գեղազարդված է «Գանձասար» գորգին պատկերված



**Պատկեր 6.**

կենաց ծառերով/**պատկեր 6**/<sup>1</sup>:

Ակնհայտ է, որ դրանք բոլորն էլ աչքի են ընկնում լրացուցիչ մանրամասերի առանձնահատկություններով ու ըստ այդմ էլ հանդիսանում են հնամենի ծիսապաշտամունքային որոշակի պատկերացումների խորհրդանիշներ: Ամեն դեպքում 1731 թվականի գորգի գեղազարդման համակարգում նման հորինվածքների առկայությունը վկայում է դրա վաղ ակունքների մասին: Ասվածը վերաբերում է նաև խնդրո առարկա գորգի լայն եզրագոտում դրան մեկընդմեջ պատկերված բազմաթերթ երկրաչափականացված վարդակին:

«Գանձասար» գորգի թվագրմանն ու ծագման տարածաշրջանին վերաբերող հստակ տվյալները հնարավորություն են ստեղծում թվագրել նաև XVII- XVIII դդ. վերաբերող այն գորգերը, որոնց գեղազարդման համակարգում կան խնդրո առարկայի գեղազարդման համակարգում եղած տարրերի տարբերակներ: Ասվածը կոնկրետ դեպքում վերաբերում է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի գանձատանը պահվող թիվ 49 գորգին: Այս պատկերային գորգի հետաքրքրությունը առաջին հերթին գեղազարդման համակարգի ինքնատիպության մեջ է: Դրա հիմնական տարրերը «կենաց ծառ» նախշերի համադրությամբ ներկայացված ու նաև խաչազարդերով լրացված մարդկային պատկերների ոճավորումներն են /**պատկեր 7**/: Ըստ ամենայնի, մենք այստեղ գործ ունենք ծիսապաշտամունքային որոշակի նշանակություն ունեցած ու նաև որոշակի արարողության համար նախատեսված գորգի հետ: Սակայն «Գանձասար» գորգի գեղազարդման համակարգի հետ ունեցած առնչությունն այս դեպքում վերաբերում է լայն եզրագոտուն. պարզվում է, որ այն նույնպես գեղազարդված է վերն արդեն ներկայացված «կենաց ծառ» նախշով ու դրան մեկընդմեջ պատկերված գծայնացված բազմաթերթ վարդակով: Ընդ որում պարզ համեմատությունից անգամ ակնհայտ է դառնում դրանց բացարձակ նմանությունը: Պետք է շեշտենք, որ Մայր Աթոռում պահվող գորգի եզրագոտու բուսածաղկային հորինվածքների՝ կենաց ծառի ու բազմաթերթ վարդակի գծայնացման կամ ոճավորման սկզբունքները միանգամայն

---

<sup>1</sup> Մեզեյան թանգարան ցուցասրահ, գ/հ 11:

ներդաշնակված են գորգադաշտի հիմնական հորինվածքների ոճավորումներին:



**Պատկեր 7.** Պատկերային գորգ, հատված, /Մայր Աթոռ , գանձատուն/:

Այսինքն՝ այստեղ ամեն ինչ ենթարկված է մի ընդհանուր, տրամաբանված գաղափարախոսության, որի հիմքում, ըստ էության, ընկած է վերն արդեն ասված կյանքի

հավերժության գաղափարը: Համենայնդեպս դա են խորհրդանշում գորգադաշտում շարք առ շարք ներկայացված «կենաց ծառերն» ու գահավորակին բազմաձև ծիսականացված կերպարի կրկնվող պատկերները: Ըստ էության, դա է խորհրդանշում նաև այդ պատկերի ճակատին գործված խաչազարդը, այն նույնպես ներկայացնում է կյանքի հավերժության գաղափարը: «Գանձասարի» և այս պատկերային գորգի լայն եզրագոտիների բացարձակ նմանությունը չի կարող լինել պատահականության արդյունք, խոսքն այստեղ կարող է լինել միայն անմիջական սկզբնաղբյուրային ազդեցության մասին: Եվ այս պարագայում է, որ ակնհայտ է դառնում ծագումնաբանական բոլոր հիմնական տվյալները կրող «Գանձասար» գորգի սկզբնաղբյուրային նշանակությունը:

Տարիներ առաջ մենք Մայր Աթոռի գանձատանը պահվող այդ գորգը թվագրել էինք XVII- XVIII դարի երկրորդ կեսով, սակայն պատմահամեմատական տվյալների սակավության պատճառով դժվարություններ են ծագել դրա ծագման տարածաշրջանի բացահայտման հարցում: Ընդ որում որպես ծագման հավանական տարածաշրջաններ ենթադրվել էին Փոքր Հայքի գորգագործական կենտրոնները, իսկ լայն գոտու հարցում էլ կարևորվել էր պատմական Հայաստանի արևելյան նահանգների, հատկապես Վասպուրականի արևելյան գավառների գորգարվեստի ավանդույթների ազդեցության գործոնը<sup>1</sup>: Միաժամանակ մեր հետազոտությունների արդյունքում ունեինք այն համոզմունքը, որ նմանատիպ գորգերը կարող էին

<sup>1</sup> **Poghosyan Ashkhunj, Reverend Father Asoghik Karapetian,** The Rug Collection of the Holy See Museums, –«Armenian Knot: Traditions of Carpet Weaving Art».Proceedings of the internationalConference.Yerevan, 20-22 November, 2013, Yerevan, History Muzeum of Armenia, 2016 , էջ 282, նկ. 1:

ստեղծվել միայն մասնագիտացված արհեստանոցային պայմաններում, վանական համալիրներին կից գործատներում: 1731 թ. գործված և այս գորգի գեղազարդման համակարգում կարևորված «կենաց ծառ» ոճավորված հորինվածքը թույլ է տալիս եզրակացնել, որ այս պատկերային գորգի ստեղծման առավել հավանական վայրերը պետք է փնտրվեն Հայոց արևելից կողմի գորգագործական կենտրոններում:

Բայց նաև չի կարող բացառվել դրա ծագման փոքրասիական վարկածը. այդ տարածաշրջաններում չափազանց զգալի էին արևելյան Հայաստանի գորգագործական կենտրոնների ազդեցությունը<sup>1</sup>: Ամեն դեպքում Մայր Աթոռի թանգարանում պահվող խնդրո առարկա պատկերային գորգը կարիք ունի խոր ու համապարփակ ուսումնասիրության, որի արդյունքում գուցե և հնարավոր լինի առավել որոշակի պարզաբանումներ կատարել դրա ծագումնաբանության ու մասնավորապես պատվիրատուի հետ կապված հարցերում:

Այս գորգի հետ կապված հետաքրքրո ւթյունն ու



դրա ուսումնասիրման անհրաժեշտությունը պայմանավորված են նաև մեկ այլ հանգամանքով: Մենք պարզել ենք, որ գոյություն ունի նույն ժամանակաշրջանում ստեղծված դրա կրկնօրինակը, որը պահվում է Վարշավայի արքայական ամրոցի թանգարանում պահող «**Թերեզա Սահակյան**» հավաքածուի կազմում:

**Գ.** Հայոց գորգերին բնորոշ գեղազարդման հիմնական տարրերից է նաև խնդրո առարկա գորգի գեղազարդման համակարգում կարևորված «**խոյեղջուր**» ոճավորված պատկերը /**պատկեր 8**/: Այն հայտնի է բազմաթիվ տարբերակների տեսքով և հիմնականում բնորոշ է պատմական Հայաստանի արևելյան նահանգների գորգագործական կենտրոններին:

<sup>1</sup> **Ա.Ա., Պողոսյան**, Կովկասյան ու փոքրասիական գորգագործական կենտրոնների փոխառնչությունների մասին, «Գիտական հոդվածների ժողովածու», Գավառի պետական համալսարան, 1, Եր., 2014, էջ 270-282: Նույնի՝ Արցախյան գորգագործական ավանդույթների արեալային տարածման ու Կովկասի հարավարևելյան գորգագործական կենտրոնների փոխառնչությունների մասին, «Բանբեր հայագիտության», 2015, Երևան, թիվ 2-3, էջ 78-104: Նույնի՝ **Rug weaving Culture of Artsakh**, Historico-Ethnographic illustrated study, Saarbrücken, «Scholars Press», 2015, էջ 48-55, նույնը՝ **On the Origin Anatolian Rugs**, էջ 258-277 և այլն:



**Պատկեր 9.**

Այստեղ պատկերվածը երկուական հորինվածքներից կազմված մի ամբողջություն է: Ներկայացված են հորիզոնական շարքով ու ծածկում են գորգի վարի ու վերի մասերում «կենաց ծառերի» ու խոշոր շրջանակների միջև մնացած ազատ տարածքը: Այս դեպքում ուշագրավն այն է, որ հայոց գորգերի գեղազարդման համակարգում «Խոյեղջուր» հորինվածքի ավելի վաղ թվագրությամբ պատկերներ մեզ հայտնի չեն, մինչդեռ դրա հետագա տարբերակները մեծ տեղ են հայոց գորգերի՝ հատկապես պատմական Հայաստանի արևելյան ու հյուսիսարևելյան նահանգների գորգագործական կենտրոններում: Ընդ որում հարկ է նկատի ունենալ, որ վերը հիշատակված գորգագործական կենտրոններում այս ոճավորումները ներկայացվում են նաև որպես գորգադաշտի հիմնական հորինվածք ու այդ դեպքում պատկերվում են մեկ կամ երկու ուղղաձիգ շարքով /**պատկեր 9**/:

**Դ. Երկայնաձիգ խոշոր շրջանակները և դրանցում ամփոփված զարդանախշերը:** «Գանձասար» գորգի գեղազարդման համակարգի հիմնական տարրը գորգադաշտի անվնաս մնացած տարածքում չորս անգամ կրկնված երկայնաձիգ ու ձևավոր շրջանակն է, որում ամփոփված են ուղղաձիգ շարքով դասավորված գեղազարդման մանրամասեր: Դրանց արանքներն ու գորգադաշտի ազատ մնացած տարածքները գեղազարդված

են իրար հակընդդեմ կցված աղեղնաձև զարդանախշերից կազմված հորինվածքների կանոնավոր շարքերով: Դժբախտաբար մեր ձեռքի տակ եղած սև ու սպիտակ լուսանկարը հնարավորություն չի ընձեռում բավարար պատկերացում կազմել այդ ու շրջանակներում ամփոփված հորինվածքների մանրամասերի մասին, սակայն դրանով հանդերձ նկատելի է, որ դրանք կազմում են մի բարդ ամբողջություն:

Հայոց գորգերի ծագումնաբանական ու տիպաբանական հարցերի ուսումնասիրման առումով կարևոր դեր ունի նաև վերը ներկայացված ձևավոր շրջանակը: XIX – XX դ. սկզբներին վերաբերող հայոց ավանդական գորգերի կազմում կան այնպիսիք, որոնց գեղազարդման համակարգի առանցքային տարրը հենց նմանատիպ հորինվածքն է /**պատկեր 10**/: Խոսքը վերաբերում է մեր կողմից «**Կոգովխտ**» անվանակոչված տիպի գորգերին, որոնք հայտնի են նաև «**Բայազետ**» անունով: Դաշտային ազգագրական նյութերի ու գորգավաճառականների տրամադրած տեղեկությունների

համադրման շնորհիվ պարզել ենք, որ դրանք բնորոշ էին Վասպուրականի հյուսիսարևմտյան, ինչպես նաև Սյունիքի, Արցախի, Ուտիքի գորգագործական կենտրոններին: Համենայնդեպս գորգավաճառականների միջավայրում այդ տիպի գորգերը տարբերակվում են «**Քայազետ**» անվանումով: Դրա գեղազարդման համակարգի հիմնական հորինվածքն իր կառուցվածքով ու մանրամասներով աղերսվում է «Գանձասար» գորգի գեղազարդման համակարգում պատկերվածին: Մանրամասների առումով էլ նկատի ունենք «խոյեղջուր» ոճավորված երկու պատկերներին, որոնք այստեղ ներկայացված են հորիզոնական դիրքով ու դարձյալ հակընդդեմ տեսքով:

Ըստ էության, այս գորգի գեղազարդման ավանդույթները լայնորեն հայտնի էին Կոզովիտ-Մասյացոտն գավառների գորգագործական կենտրոններին ու հետագայում էլ՝ XIX դարի կեսերից սկսած, տեղայնացվել են նաև Սևանի ավազանի ու հատկապես Գեղարքունիքի գորգագործական կենտրոններում:

Ամփոփելով այս ուսումնասիրությունը՝ կարելի է եզրակացնել, որ «**Գանձասար**» գորգը, ունենալով ծագման վայրի ու ստեղծման տարեթվի վերաբերյալ հստակ տվյալներ, չափազանց կարևոր սկզբնաղբյուր է հայոց ուշ միջնադարյան ու հետագա շրջանի գորգագործական մշակույթի ավանդույթների ուսումնասիրման հարցում:

Դրա գեղազարդման բոլոր տարրերն էլ այս կամ այն չափով հետազոտողին հնարավորություն են ընձեռում որոշակի պարզաբանումներ, ճշգրտումներ ու բացահայտումներ կատարել դրանց ու դրանց հետագա տարբերակների ծագման և տարածման արեալների մասին մասնագիտական շրջաններում արմատացած տեսակետներում:

Ասվածները վերաբերում են հատկապես գորգերի «Լադիկ» ու «Կոզովիտ» տիպերին ու դրանց տարբերակներին, որոնք փաստորեն ներկայացնում են «Գանձասարի» ավանդույթների տարածման տեսանելի արեալները՝ առաջին հերթին պատմական Հայաստանի արևելյան նահանգների ու փոքրասիական հայաբնակ տարածքների գորգագործական կենտրոնները:

Այդպիսով, 1731 թվականին գործված «Գանձասար» գորգն ի շարս նմանատիպ այլ օրինակների, ինքնին հաստատում է հայոց գորգարվեստի ավանդույթների ներկայության փաստը փոքրասիական գորգագործական կենտրոններում:



**Պատկեր 10.**  
Գորգ «Կոզովիտ»:

Ինդրո առարկան հաստատում է վանական խոշոր համալիրներում արհեստանոց-գործատների գոյության փաստը, որտեղ կենտրոնացված մասնագիտական խմբերը ի վիճակի էին ստեղծել մշակութային կատարյալ արժեքներ:

Եվ ամենակարևորը՝ մատնանշում է արցախյան գորգագործական կենտրոններում արհեստանոցային գորգագործության գոյության փաստն ու գորգագործական մշակույթի արցախյան ավանդույթների նշանակությունը հայոց գորգարվեստի ամբողջական նկարագրում:

### HISTORICAL AND CULTURAL SIGNIFICANCE OF THE CARPET WOVEN IN 1731, IN CHAREKA DESERT

**POGHOSYAN ASHKHUNJ**

*PhD in Historical Sciences, Associate Professor  
Lecturer, Gavar State University*

Предметом исследования данной статьи является ковер сотканный в 1731 году, в северо- западной ковроткацких центрах Арцаха, в монастыре Чарек. Оно относится коврам типа “Гандзасар” арочный группы. На ней имеется надпись на армянском языке, в которой фиксирован данные о месте и времени изготовления, а также имя заказчика. Таким образом, при изучения культуру армянского ковроткачества декоративные элементы этого ковра имеют значимость первоисточника. Используя представленные возможности, автор внес некоторое корректировки в вопросах происхождения и ареальности

распространения /в том числе в Малой Азии/ традиции ковров этого типа относящегося 18-20 -ых вв.

The article examines the rug belonging to the group of arch shaped rugs, which was woven in 1731 in the Chareka Priory of Northern Artsakh and is named "Gandzasar" by the author. The rug bears an Armenian inscription, where the date and the place of manufacture, as well as the name of the ordering customer are mentioned. Thus, in the study of the Armenian rug-weaving culture, the decoration system of this rug is of primary-source historical significance. Using these possibilities the author has made some precise definitions and clarifications related to the origin of such rugs made in the 18-20 cc. in some rug-weaving centers (including Asia Minor).

**Key words:** "Gandzasar", Chareka Priory, "tree of life", "Cogovit", "Ladik", "Poppy".

## ОБ ИСТОРИКО-КУЛЬТУРНОМ ЗНАЧЕНИИ КОВРА, СОТКАННОГО В 1731 ГОДУ В ПУСТЫНЕ ЧАРЕК

ПОГОСЯН АШХУНДЖ

канд. ист. наук.

преподаватель ГГУ

Предметом исследования данной статьи является ковер, сотканный в 1731 году, в северо- западных ковроткацких центрах Арцаха, в монастыре Чарек. Он относится к коврам типа "Гандзасар" арочной группы. На ней имеется надпись на армянском языке, в которой зафиксированы данные о месте и времени изготовления, а также имя заказчика. Таким образом, при изучении культуры армянского ковроткачества, декоративные элементы этого ковра имеют значимость первоисточника. Используя представленные возможности, автор внес некоторые корректировки в вопросах происхождения и ареала распространения /в том числе в Малой Азии/ традиции ковров этого типа, относящегося 18-20 -ых вв.

**Ключевые слова:** "Гандзасар", Монастырь Чарек, "древо жизни", "рога муфлона", "Коговит", "Ладик", "тюльпан".

Հոդվածը ներկայացվել է խմբագրական խորհուրդ 08.09.2019թ.:

Հոդվածը գրախոսվել է 06.10.2019թ.: